ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 հոկտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

139
(2989)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՇՈՒՐ ԲԻԶՆԵՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՈՎ ԻՆՉՔԱՆ ՀԱՐԿ Է ՎՃԱՐԵԼ

ՀՀ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը հայտարարել էր՝ «Հայաստանում շոու բիզնեսի ներկայացուցիչներն սկսել են ավելի պարտաճանաչ հայտարարագրել իրենց եկամուտները եւ վճարել հարկերը»: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2024 թվականի փետրվարին հակառակի մասին խոսեց՝ թիրախավորելով հայտնիներին, թե շոու բիզնեսի ներկայացուցիչները պետք է հարկ վճարեն, այլապես օրենքով սահմանված պատասխանատվության կենթարկվեն:

Փաշինյանի խոսքով՝ օդանավակայան տանող ճանապարհից չպիտի օգտվեն արտագնա աշխատանքի գնացող եւ արտերկրում համերգներով հանդես եկող շոու բիզնեսի ներկայացուցիչները, քանի որ այդ ճանապարհը կառուցվել է հարկ վճարողների շնորհիվ: Ըստ Փաշինյանի՝ օդանավակայան գնացողները ինչո՞ւ պիտի մեր հարկերի շնորհիվ կառուցված ճանապարհով երթեւեկեն. «Մենք չենք ցանկանում, որ իրանք մեր հաշվին ստեղծված ճանապարհով երթեւեկեն: Թող մեր սիրելի հայրենակիցներն իրենց համար ճանապարհ սարքեն ու այդ ճանապարհով երթեւեկեն, որովհետեւ, մաշվում ա, չէ՞, էդ ճանապարհը: Մենք դա երկար ժամանակ չենք հասկացել: Մեզ թվում էր, թե մենակ կոշիկն ա մաշվում. ճանապարհն էլ ա մաշվում.... Շոու բիզնեսի ներկայացուցիչներին օդանավակայանից պիտի ասենք՝ էս ճանապարհները ձեզ համար չեն, Ջանգվի ձորով, բնաշխարհը վայելելով, ոտ-ոտ եկեք, հասեք Երեւան»,- իր խոսքում նշել էր Փաշինյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե. խնդրել էինք, համաձայն մեր տրամադրած ՀՎՀՀ-ների, համապատասխան կերպով տրամադրել անհատ ձեռնարկատերերի տարեկան հարկային շրջանառությունը 2019 թվականից մինչեւ 2023 թվականը:

Աղյուսակում կտեսնեք շոու բիզնեսի 15 ներկայացուցչի հարկային շրջանառությունը: Օրինակ՝

1. Միհրան Ծառուկյանը 2019-ին վճարել է 932 հազար դրամ հարկ, 2020-ին՝ 1 մլն 18 հազար, 2021-ին՝ 70 հազար, իսկ 2022-ին եւ 2023-ին առկա հարկային մուտքեր չկան:
2. Ալբերտ Սիմոնյանը՝ նույն ինքը Թաթա Սիմոնյանը, 2019-ին վճարել է 2 մլն 445 հազար դրամ հարկ, հաջորդող տարիները ակտիվություն չի ցուցաբերել:
3. Արկադի Դումիկյանը եւ Իվետա Մուկուչյանը հարկային ակտիվություն չեն ցուցաբերել:
4. Արփինե (Արփի) Գաբրիելյանը 2020-ին 29 հազար դրամ հարկ է վճարել, իսկ 2021-ին՝ 30 հազար դրամ:
5. Ռաֆիկ (Ռաֆայել) Երանոսյանը 2019 թվականին վճարել է 235 հազար 960 դրամ հարկ, 2020-ին՝ 753 հազար 886 դրամ, 2021-ին՝ 1 մլն 208 հազար դրամ, 2022-ին՝ 1 մլն 346 հազար դրամ, 2023-ին՝ 2 մլն 145 հազար դրամ:
6. Ռազմիկ Ամյանը 2019-ին վճարել է 499 հազար դրամ հարկ, 2020-ին՝ 990 հազար դրամ, 2021-ին՝ 12 հազար դրամ, 2022-ին՝ 18 հազար դրամ, 2023-ին՝ 0 դրամ:
7. Սարո Թովմասյանը 2019-ին վճարել է 216 հազար 848 դրամ հարկ, 2020-ին՝ 407 հազար դրամ, հաջորդող տարիներին, 2021 եւ 2022 թվականներին 0 դրամ է վճարել, իսկ 2023-ին՝ 1 մլն 563 հազար դրամ:
8. Արման Հովհաննիսյանը հարկեր վճարել է միայն 2019 թվականին՝ 289 հազար դրամ:
9. Հայկարամ Ղեւոնդյանը՝ Սպիտակցի Հայկոն, հարկ վճարել է միայն 2021 թվականին՝ 11 հազար 500 դրամ:
10. Սոնա Շահգելդյանը վճարել է միայն 2023 թվականին՝ 24 հազար դրամ:
11. Լուիզա Ղամբարյանը 0 դրամ է վճարել նշված ժամանակահատվածում:
12. Մարտին Մկրտչյանը հարկ վճարել է 2019 եւ 2020 թվականներին՝ համապատասխանաբար 184 հազար դրամ եւ 194 հազար դրամ:
13. Ելիզավետա Ներսիսյանը՝ Լուիզա Ներսիսյանը, 2019 եւ 2020 թվականներին հարկ չի վճարել, սակայն 2021-ին վճարել է 449 հազար դրամ հարկ: 2022 թվականին Ներսիսյանը կրկին հարկ չի վճարել, իսկ 2023-ին վճարել է 18 հազար դրամ:
14. Արտաշ Ասատրյանը Հայաստանում հարկ չի վճարել:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը առաջին անգամ չէ, որ անհեթեթ որոշում է կայացնում՝ միտում ունենալով ոչնչացնել հայկականը: ArmLur.am-ին դիմած ուսուցիչները դեռ անցած ամիս էին պատմում, որ դպրոցներին ԿԳՄՄՆ-ից ներքին հրաման է իջեցվել, ըստ որի՝ ուսուցիչները չեն կարող աշակերտներին դասավանդել ազգային երգ ու պար: ArmLur.am-ի հետ զրույցում ԿԳՄՄՆ-ի մասնագիտական կրթության եւ ուսուցման բաժնի պետ Կարեն Մանուկյանն ասել էր, որ դա անհեթեթություն է, եւ նման հրահանգ նախարարության կողմից չկա: Հավելյալ տեղեկության համար հորդորել էր գրավոր հարցում ուղարկել նախարարությանը: ArmLur.am-ը ուղարկել էր գրավոր հարցումը եւ այժմ ստացել է պատասխանը, որտեղ նշված էր հետեւյալը. «Հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ հաստատվել է Հանրակրթության պետական նոր չափորոշիչը, որի 15-րդ կետով սահմանված՝ հանրակրթական ծրագրերի 7 ուսումնական բնագավառներից մեկը «Արվեստ եւ արհեստ» բնագավառն է: Այն իրականացվում է միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ՝ արվեստի եւ ժողովրդական արհեստների տարբեր տեսակներին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոցով եւ նպաստում է Ժողովրդական ավանդույթներին եւ մշակութային ժառանգությանը հաղորդակցվելուն»: Ինչպես նամակում էր նշվում՝ «Արվեստ եւ արհեստ» բնագավառը հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի 1-12-րդ դասարաններում ներկայացվում է երաժշտություն, կերպարվեստ, պար, թատրոն եւ դեկորատիվ-կիրառական արվեստ (744) ուսումնական առարկաներով՝ տարրական, միջին եւ ավագ դպրոցներում, առանձին կամ ինտեգրված դասընթացով: «Միաժամանակ հայտնում ենք, որ կրթական քաղաքականության ներդրման հավասար մոտեցում ցուցաբերելու սկզբունքից ելնելով՝ «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամի կողմից միջոցառման շրջանակում վերապատրաստված մասնագետները կարող են դասավանդել «Արվեստ-արհեստ» ուսումնական բնագավառի առարկաներից որեւէ մեկը՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի պահանջներին բավարարելու դեպքում», - գրված էր նամակում:

ՔՊ-ում «դռնեդուռ» ընկած արդարադատության նախարարի նոր թեկնածու են փնտրում: Միակ թակնածու Արփի Դավոյանին մտավոր կարողությունների ու անպատրաստվածության համար մերժելուց հետո՝ ՔՊ խմբակցության պատգամավորներն այս օրերին փորձում են գտնել նոր թեկնածուի, որը այս անգամ ընդունելի կլինի վարչության համար, իսկ ավելի ճիշտ՝ Նիկոլ Փաշինյանի համար: ՔՊ-ից մեզ հայտնեցին, որ խմբակցության ներսում այս պահի դրությամբ երկու անուն է շրջանառվում՝ վարչապետի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյան, որը մասնագիտությամբ իրավաբան է, եւ ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյան, որին դարձյալ Անդրանիկ Քոչարյանն է լոբբինգ անում, որպեսզի անձնական օգտագործման նախարար ունենա: Իհարկե, այս ամենն ընդամենը խոսակցությունների մակարդակի, է եւ ՔՊ-ում վերջնական որոշում չունեն: Պատգամավորները մինչեւ երեքշաբթի վարչության նոր թեկնածուների պետք է առաջադրեն, որպեսզի հաջորդ շաբաթ կայանալիք վարչության նիստին վարչապետին բավարարող թեկնածու գտնեն եւ ընտրեն: Իսկ եթե ՔՊ-ական պատգամավորները չընտրեն թեկնածու, արդեն այդ հարցով Նիկոլ Փաշինյանն անձամբ կզբաղվի: «Ժողովուրդ» օրաթերթը այս հարցի առնչությամբ փորձեց կապ հաստատել վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանի հետ, սակայն վերջինս չարձագանքեց մեր զանգերին եւ նամակներին, իսկ ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանը, ինչպես ֆրակցիայից փոխանցեցին, երկրում չէ: Ինչպես հայտնի է՝ լոբբինգ է արվում նաեւ ՀՀ օմբուդսմեն Անահիտ Մանասյանի թեկնածության համար:

Եվրոպական միության անդամակցության հարցով հանրաքվե անցկացնող արտախորհրդարանական ուժերը, որոնք դեռ սեպտեմբերի 16-ից ստորագրահավաք են անցկացնում, գոհ չեն արդյունքներից: «Ժողովուրդ» օրաթերթը նախաձեռնողներից տեղեկացավ, որ պահանջվող 50 հազար ստորագրությունների 2/3-ն է հավաքվել մինչ օրս, այսինքն՝ մոտ 33 հազար, մինչդեռ սպասելիքներն ավելի մեծ են եղել: Եթե հաշվի առնենք, որ ստորագրահավաքը ոչ միայն Երեւանում, այլեւ ՀՀ մյուս քաղաքներում եւս անցկացվում է, ապա հավաքված ստորագրությունների թվերը, մեղմ ասած, խոստումնալից չեն: Իսկ եթե նաեւ հաշվի առնենք, որ ԱԺ-ում մերժվելուց հետո նույն թիմով շուրջ 300 հազար ստորագրություն հավաքելու անհրաժեշտությունն է լինելու, ապա լուրջ խնդիր է: «Եվրոպայի միությանը Հայաստանի անդամակցության գործընթացի մեկնարկի» մասին օրինագիծը խորհրդարան հասցնելու համար նախաձեռնող քաղաքական ուժերը պետք է մինչեւ նոյեմբերի 14-ը 50 հազար ստորագրություն հավաքեն: Եթե արտախորհրդարանական ուժերի նախագիծը հասնի ԱԺ ու մերժվի, ապա երկրորդ փուլով նախագիծը կդրվի հանրաքվեի, բայց այս անգամ արդեն 60 օրում պետք է 300 հազար քաղաքացի ստորագրի նույն պահանջի տակ: Ի դեպ, խորհրդարանում մերժվելու սցենարը շատ հավանական է, քանի որ Նիկոլ Փաշինյանն արդեն բացեիբաց հայտարարել է, որ Եվրամիությանն անդամակցելու հարցով հանրաքվե անցկացնելու անհրաժեշտություն չի տեսնում:

ԶՐՈՒՅՑ

«COP29-Ը ՊԵՏՔ Է ՃՆՇՈՒՄՆԵՐ ԼԻՆԵՆ». ԴԱՆԻԵԼՅԱՆ

Երեկ Հայաստանում տարբեր դեսպանատների առաջ ակցիաներ են իրականացվել եւ նամակներ են փոխանցվել՝ հայ ռազմաքաղաքական գերիների հետ վերադարձի վերաբերյալ:

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ ԱԳՆ շենքի բակում զրուցել է ԱԺ պատգամավոր Գառնիկ Դանիելյանի հետ:

-Պարոն Դանիելյան, ի՞նչ սպասելիքներ ունեք այս կցիաներից՝հաշվի առնելով, որ հարցն առաջին անգամ չէ, որ բարձրացվում է, սակայն երբեք ո՛չ մի էական փոփոխություն չի եղել:

-Անկախ ամեն բանից, որքան էլ, որ հնարավորությունը փոքր լինի, սա կարեւոր է: Անկեղծ կլինեմ, թե՛ մեր իշխանություններից, թե՛ միջազգային հանրությունից շատ բան ակնկալել հնարավոր չէ: Համենայնդեպս, մենք պետք է կիրառենք մեր ձեռքի տակ եղած ողջ գործիքակազմը, որպեսզի մեր բողոքի ձայնը բարձրացնենք: Եվ հույս պետք է ունենանք, որ մեր բողոքի ձայնը լսելի կլինի: Հայ հասարակությունը պետք է իր բողոքի ձայնը բարձրացնի եւ ցույց տա, որ հաշտ չէ այս իրականության հետ, որ Ադրբեջանը մի պետություն է, որը չի հարգում մարդու իրավունքներն ու միջազգային օրենքները: Երկրի բռնապետական ռեժիմն իր անօրինական գործողություններով արդեն ավելի քան մեկ տարի է Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանն է կալանքի տակ պահում եւ բազմաթիվ ռազմագերիների, որոնց պետք է անհապաղ ազատ արձակել: Այս ճնշումը պետք է ավելացնենք եւ մեծացնենք: Հատկապես՝ COP29-ը մեզ համար շատ կարեւոր է, քանի որ հնարավոր է ստեղծել իրավիճակ, որ տարբեր երկրների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուիչներ զբաղվեն այս հարցով: Պետք է ամեն գնով ճնշում գործադրենք՝ հասնելով նրան, որ միջազգային դերակատարները նույնպես COP29-ին ընդառաջ ճնշում գործադրեն Ադրբեջանի վրա: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ առաջինը այցելել ենք ՄԱԿ-ի գրասենյակ, իսկ հիմա ՀՀ արտաքին գործերի նախարարության դիմաց ենք, քանի որ երկրի արտաքին քաղաքականության եւ նման վիճակներում երկրի դիրքորոշման համար առաջին պատասխանատուն հենց ԱԳՆ-ն եւ կառավարությունն են, որոնք ո՛չ միայն մատները մատներին չեն տալիս, այլեւ հաճախ իրենց հայտարարություններով վնասում են Ադրբեջանում գտնվող ռազմագերիներին, նրանց հասցեին հնչեցնում տարբեր մեղադրանքներ, որի հետեւանքով Բաքվում ավելանում են նոր քրեական գործեր:

-Պարոն Դանիելյան, COP29-ին մնացել է մեկ ամիս, սակայն հայկական կողմը դեռեւս չի նշել՝ մասնակցելու է արդյոք, թե ոչ: Ի՞նչ եք կարծում, ինչ դիրքորոշում կորդեգրի իշխանությունը: Եվ եթե մասնակցի, ապա ի՞նչ կարելի է ակնկալել:

-Գիտեք, դժվար է ասել կմասնակցի ՀՀն, թե ոչ: Պետք է նշեմ, սակայն, որ Ադրբեջանի համար հայկական կողմի մասնակցությունը անչափ կարեւոր է: Գիտենք, որ հայկական կողմը հօգուտ Ադրբեջանի հրաժարվել է, որպեսզի Ադրբեջանը անցկացնի COP29-ը: Եվ այս հարցում կարեւոր է, որ հայկական կողմն իր մասնակցությամբ որոշակի պահանջներ դնի Ադրբեջանի դիմաց: Օրինակ՝ մասնակցություն, որի ավարտին կվերադառնա հայ ռազմաքաղաքական ղեկավարության եւ ռազմագերիների հետ միասին: Հայկական կողմը չի կարող Բաքվում մասնակցի կարգավիճակ ունենալ միայն այն դեպքում, երբ մեր եղբայրներն այնտեղ գերության մեջ կտտանքների են ենթարկվում:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԸ ՏԱՋԻԿՍՏԱՆՈՒՄ Է

«Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրության 30-ամյակը» խորագրով միջազգային միջխորհրդարանական համաժողովին մասնակցելու նպատակով Տաջիկստան է մեկնել ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը:

Պատվիրակությունների ղեկավարների կազմում Ալեն Սիմոնյանը հոկտեմբերի 10-ին մասնակցել է Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնի հետ հանդիպմանը, որին հաջորդել է Տաջիկստանի Օլի Ազգային խորհրդի նախագահ Ռուստամի Էմոմալիի անունից տրված պաշտոնական ընթրիքը, որտեղ Հայաստանի ԱԺ նախագահը շփումներ է ունեցել մասնակից տարբեր երկրների խորհրդարանների ղեկավարների հետ:

ԵՐԲ ԿՔՆՆԱՐԿՎԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգը կքննարկի հոկտեմբերի 21-ին՝ խորհրդարանի հերթական քառօրյա նիստերի նախօրեին:

ԱԺ 8-րդ գումարման 8-րդ նստաշրջանի օրակարգում ընդգրկված նախագիծը զեկուցելու է ՀՀ փոխվարչապետ, սահմանազատման հանձնաժողովի համանախագահ Միհր Գրիգորյանը, հարակից զեկուցողը Սարգիս Խանդանյանն է:

Խորհրդարանի կողմից կանոնակարգի վավերացման համար առնվազն 54 կողմ ձայն է անհրաժեշտ:

Հոկտեմբերի 8-ին Կառավարությունը խորհրդարանի վավերացմանն է ուղարկել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների համատեղ գործունեության կանոնակարգի նախագիծը:

Հիշեցնենք՝ Սահմանադրական դատարանը սեպտեմբերի 24-ին քննել էր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգի սահմանադրականության հարցը եւ հեռացել խորհրդակցական սենյակ:

Սեպտեմբերի 26-ին ՍԴ-ն հրապարակել է 2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ որոշումը:

Հայաստանի կառավարությունը սեպտեմբերի 2-ին հրապարակել էր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների համատեղ գործունեության կանոնակարգը, որը Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնեցրել եւ ստորագրել են:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ես հիշեցնեմ՝ ինչ է ասվել, սրբազաններից մեկի կողմից ասվել է, որ նախագահների ստվերը խանգարում է Բագրատ Սրբազանին, ճի՞շտ է, իսկական առաջնորդին, բնածին առաջանորդին ոչ մեկի ստվերը չի կարող խանգարել. մեծ մարդն ունի մեծ ստվեր, փոքր մարդն ունի փոքր ստվեր:

Այս մասին դատական նիստից հետո լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ անդրադառնալով օրերս Միքայել Սրբազանի այն հայտարարությանը, թե նախկին նախագահներն են ստվերում Բագրատ Սրբազանի շարժման հաջողությանը:

«Կոնկրետ Բագրատ Սրբազանին ոչ մեկի ստվերը չի խանգարի: Ինձ համար տարօրինակ ու զարմանալի է, թե ինչի են մարդիկ նման որակում տալիս»,-ասաց նա:

Հարցին՝ որեւէ կերպ, ֆինանսապես կամ այլ ռեսուրսներով աջակցե՞լ է Բագրատ Սրբազանի շարժմանը, նա պատասխանեց. «Ոչ, մեր աջակցությունը եղել է «Հայաստան» դաշինքի հայտարարությունը, ֆրակցիայի հայտարարությունը, դրանից այն կողմ որեւէ աջակցություն չի եղել, իքնը նաեւ նման կարգի աջակցության չի դիմել»:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԿԳՈՒՄԱՐՎԻ

Այսօր ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն արտահերթ նիստ կգումարի:

Օրակարգում 5 հարց է լինելու՝

«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին,

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին,

Հայաստանի Հանրապետության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջեւ թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին,

Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին,

ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐ՝ ՄԵԿԸ ՄՅՈՒՍԻ ՀԵՏԵՎԻՑ

Իշխանության ճնշումների ներքո տարբեր պաշտոններ զբաղեցնող անձինք մեկը մյուսի հետեւից հրաժարականի դիմումներ են ներկայացնում:

Միայն վերջին երկու օրերին հրաժարականի դիմումներ են ներկայացրել 3 պաշտոնյա:

Երեկ պաշտոնից ազատվել էր ՀԾԿՀ ղեկավար Գարեգին Բաղրամյանը, այսօր էլ հրաժարականի դիմումներ են ներկայացրել էկոնոմիկայի փոխնախարար Նարեկ Տերյանը եւ ՏԿԵ նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս բոլոր հրաժարականները պայմանավորված են վերջին շրջանում ՀԷՑ-ի նկատմամբ իշխանությունների խիստ ճնշումներով:

Նախ ՔՊ խմբակցությունն էր էլեկտրական էներգիայի մատակարարման ոլորտում առկա խնդիրների թեմայով քննարկում կազմակերպել, ակնհայտ էր, որ այն ոչ թե միտված է խնդիրներին լուծում գտնելուն, այլ որպեսզի լսումների ընթացքում ՔՊ-ն ամեն գնով ցույց տա, թե ինչքան վատ է աշխատում ՀԷՑ-ը: Երկու օր առաջ էլ նույն թեմայով Նիկոլ Փաշինյանն էր խորհրդակցություն անցկացրել գործադիրում:

ՔՊ-ն այս օրերին լծված է ՀԷՑ-ը ռուսաստանաբնակ հայ գործարար, «Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ Սամվել Կարապետյանի ձեռքից խլելուն:

ՔՊ-ականներն իրենց այս ճնշումներով, ըստ էության, դուրս են եկել ոչ միայն Սամվել Կարապետյանի դեմ, այլ «ատամ» են ցույց տալիս ռուսական կողմին ու փորձում են ուղերձ հղել, որ ազատվում են ռուսական կապիտալից:

Թեեւ Սամվել Կարապետյանը հայտարարել է, որ իշխանությունը ոչ մի քայլ չի անում ՀԷՑ-ը խլելու համար, բայց ակնհայտ է, որ ՔՊ-ում այս հարցում լուրջ են տրամադրված:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով հրաժարականների այս շքերթը շարունակվելու է:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱՏՕ-ն հոկտեմբերի 14-ին միջուկային զորավարժություններկանցկացնի՝ ուղղված միջուկային զենքի կիրառման մշակմանը:

Վարժանքները կանցկացվեն Բելգիայի եւ Նիդեռլանդների տարածքում եւ Հյուսիսային ծովի ջրային տարածքում՝ դաշինքի 13 պետությունների շուրջ 60 ինքնաթիռի, գլխավորապես F-16 եւ F-35 կործանիչների, ինչպես նաեւ B-52 ռմբակոծիչների ներգրավմամբ:

ՆԱՏՕ-ի համատեղ միջուկային առաքելությունների հայեցակարգը, ըստ սահմանման, հարձակողական է, այն գործնականում կիրառելի չէ որպես պատասխան հարված: Համատեղ միջուկային առաքելությունների ծրագրի մասնակիցներն են ՆԱՏՕ-ի հինգ ոչ միջուկային պետություններ՝ Բելգիան, Գերմանիան, Իտալիան, Նիդեռլանդները եւ Թուրքիան, որոնց ավիաբազաներում 20-ական ամերիկյան մարտավարական ավիառումբ կա մասնակից երկրներից յուրաքանչյուրի համար:

ԱՄՆ-ը հրաժարվել է Սառը պատերազմի ավարտից հետո դուրս բերել իր մարտավարական միջուկային զենքը Եվրոպայից: ՆԱՏՕ-ի մյուս երկրները, բացի այդ հինգ պետություններից եւ Դաշինքի երեք միջուկային երկրներից (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա), մասնակցում են զորավարժություններին՝ կատարելով օժանդակ առաջադրանքներ:

ՋԳՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ

Իրանում ՌԴ դեսպանատունը, հաշվի առնելով իրավիճակի սրումը՝ պայմանավորված Իսրայելից իրանական տարբեր օբյեկտների ուղղությամբ պատասխան հարվածի հավանականությունը՝կոչ է անում Իրանում գտնվող իր քաղաքացիներին խստորեն պահպանել անվտանգության միջոցները եւ մշտապես հետեւել ՌԴ դեսպանության կողմից հրապարակվող տեղեկատվությանը:

ԻՍՐԱՅԵԼԸ ԿՐԱԿ Է ԲԱՑԵԼ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆԻ ՎՐԱ

ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերի գլխավոր շտաբը հարավային Լիբանանում (ՅՈՒՆԻՖԻԼ) եւ խաղաղապահ հենակետերը ենթարկվել են իսրայելական բազմակի հրետակոծությունների, ասվում է ՅՈՒՆԻՖԻԼ-ի հինգշաբթի օրը տարածած հաղորդագրության մեջ, փոխանցում է «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալությանը:

«ՅՈՒՆԻՖԻԼ-ի գլխավոր շտաբը եւ մոտակա հենակետերը բազմիցս հրետակոծվել են»,- ասվում է հայտարարության մեջ:

Համաձայն հաղորդագրության՝ երկու խաղաղապահ վիրավորվել է, երբ իսրայելական տանկը կրակ է բացել ՄԱԿ-ի դիտակետի վրա:

«Իսրայելցի զինվորականները կրակ են բացել նաեւ օբյեկտիվ հսկողության սարքավորումների վրա եւ խափանել դրանք»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ԱԿՑԻԱՆԵՐ ԵՆ ՍԿՍՎԵԼ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻ ՄՈՏ

Երեկ ՄԱԿ-ի գրասենյակի եւ մյուս դեսպանատների մոտ ակցիաներ են սկսվել:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ հոկտեմբերի 11-ին ժամը 11:00-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ՀՀ ԱԳՆ շենքի, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիական Հանրապետության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատների առաջ ակցիաներ են իրականանալու եւ նամակներ են փոխանցվելու Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների եւ պատանդների անհապաղ ազատ արձակման պահանջով:

Նշենք, որ 2024 թվականի նոյեմբեր ամսին Ադրբեջանում կայանալիք ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության համաժողովին (COP29) ընդառաջ աշխարհի տարբեր երկրներում նույնպես մեկնարկել են ակցիաներ՝ Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների եւ պատանդների անհապաղ ազատ արձակման պահանջով:

Հավելենք, որ վերը նշված նախաձեռնությանը միացել են ԱՀ մարդու իրավունքների պաշտոնաթող պաշտպաններ Յուրի Հայրապետյանը, Ռուբեն Մելիքյանը, Արտակ Բեգլարյանը, ինչպես նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտոնաթող պաշտպաններ Արման Թաթոյանը եւ Լարիսա Ալավերդյանը:

Նշենք նաեւ, որ COP29-ին մասնակցելու հետ կապված ՀՀ-ն առայժմ ոչ մի հստակ պատասխան չունի:

Անդրադառնալով COP29-ին ընդառաջ հայկական սփյուռքում ընթացող եւ դրանց հակառակ տեղի ունեցող գործընթացներին Հայ Դատի կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գեւորգ Ղուկասյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Վերջին մեկ շաբաթվա ընթացքում ապշերոնյան պետական քարոզչամեքենան, COP - 29-ին ընդառաջ ստանալով միջազգային առարկայական ազդակներ, Հայ դատի համակարգի կողմից իրականացվող աշխատանքներին հակազդելու նպատակով, հրապարակել է մի շարք ծավալուն հոդվածներ եւ մի ֆիլմ, ինչպես միշտ՝ շաղախված ստով եւ կեղծիքով:

Դրանցից զատ, շարունակվում են ադրբեջանական սադրանքները Հայ դատի Ամերիկայի եւ Եվրոպայի հանձնախմբերի դեմ: Մի դեպքում, շինծու քրեական գործ հարուցելու փորձով ձգտում են կորզել 5 մլն ԱՄՆ դոլար, մյուս դեպքում երկլեզու ֆիլմ են շրջանառում եվրոպական հարթակներում՝ փորձելով արատավորել գրասենյակի հեղինակությունը: Մի բան կարծում եմ այլեւս ակնհայտ է՝այս COP-ը նման չի լինելու նախկին COP-երին»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՅԳԻՆԵՐԸ ԾԱԽՈՒՄ ԵՆ ՆԱԽԿԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՉԱԽՈՅԱՆ

Բլոգեր Արթուր Չախոյանը վաղը՝ հոկտեմբերի 11-ին՝ ժամը 16:00 ին, Արգիշտի 1 հասցեում՝ Երեւանի քաղաքապետարանի գլխավոր մուտքի մոտ սպասելու է երիտասարդությանը եւ մտահոգ երեւանցիներին: Նա սոցցանցի իր էջում գրել է.

«Ուրեմն ըստ Երեւանի քաղաքապետարանի նոր հաստատված գլխավոր հատակագծի Երեւանի 60 հոդվածի հողերի նշանակությունը փոխվել է, այսինքն տվյալ դեպքում Տորք Անգեղ այգու կանաչ գոտին դա առաջ ընդգրկված էր 60 հոդվածի ցանկում որը ըստ օրենքի ենթակա չի եղել օտարվելու եւ վաճառվելու, բայց ըստ նոր հաստատված գլխավոր հատակագծի Տորք Անգեղ այգու կանաչ գոտու մեծ մասը այլեւս 60 հոդվածի հող չի հանդիսանում, քանի որ նոր հաստատված գլխավոր հատակագծում տվյալ տարածքները ճանաչվել են «ընդհանուր օգտագործման բնակավայրերի հողեր» այլ ոչ թե այգի կամ պուրակի տարածքներ որը ենթակա է օտարման, դրա իսկ հետ է կապված Վիտալի Բալասանյանի կողմից շութափույթ ապօրինի համայնքային հողի հողազավթման պատճառը:

Այսինքն են որ Նիկոլ Փաշինյանը բղավում էր որ նախկիները Մանուեմենտի այգիները դիլիմ դիլիմ կիսեցին եւ դղյակներ կառուցեցին եւ որ խոսկ էին տվել որ այդ այգիները վերադարցնելու են... իսկ հիմա Նիկոլ Փաշինյանի իշխանությունն օրոք են այգիները դիլիմ դիլիմ ծախում իրենց ասած նախկիների համար:

Հուսամ արդեն բոլորի համար պարզ դառավ չէ թե խի էր տիգրան ավիրյանը արագացված տեմպերով խի գլխավոր հատակագիծը հաստատեցին, որ 60 հոդվածի համայնքային հողերը ծախեն:

Եթե չես ուզում որ դա տեղի ունենա ապա, ուրեմն Հոկտեմբերի 11-ին՝ ուրբաթ օրը ժամը 16:00 ին, արի Արգիշտի 1 հասցե՝ Երեւանի քաղաքապետարանի գլխավոր մուտքի մոտ սպասելու եմ բոլոր մտահոգ երիտասարդությունը եւ երեւանցիներին:

Եկեք բոլորս համախմբվենք եւ հանրային ճնշում գործադրենք Երեւանի քաղաքապետարանի հանդեպ, որ իր կայացրած սխալ որոշումը չեղարկի: Եթե երիտասարդությունը եւ երեւանցին այդ օրը չհամախմբվի եւ չպայքարի քաղաքապետարանի կայացրած սխալ որոշման դեմ, ապա այդպիսով Երեւանի քաղաքապետարանը կլեգիտիմացնի իր կայացրած սխալ որոշումը, ու համայնքային հանդիսացող հողերի այգիները կվաճառեն»:

ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ՀՇԿՀ նախագահ Գարեգին Բաղրամյանն աշխատանքից ազատման դիմում է ներկայացրել Ազգային ժողովի նախագահին:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատել է նրա մամուլի խոսնակ Լիանա Ազիզյանը:

Բաղրամյանն այդ պաշտոնին էր 2019 թ.-ից: Այս տարվա փետրվարի 29-ին խորհրդարանը նրան վերընտրել էր նույն պաշտոնում:

Հիշեցնենք, որ այսօր «Ժողովուրդ օրաթերթը»-ը գրել էր. «ՔՊ-ականները շարունակում են իրենց արշավը՝ընդդեմ ռուսաստանաբնակ հայ գործարար, «Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ Սամվել Կարապետյանի: Իշխանականներն ամեն ջանք գործադրում են, որպեսզի նրա ձեռքից խլեն «Հայաստանի էլեկտրական ցանցերը»:

Նախ՝ ՔՊ խմբակցությունն էր ԱԺ-ում լսումներ նախաձեռնել էլեկտրաէներգիայի մատակարարման խնդիրների հետ կապված. Հայկ Կոնջորյանի նախաձեռնությամբ նման նիստ հրավիրվեց, որը աննախադեպ էր, եւ ակնհայտ էր, որ այն ոչ թե միտված է խնդիրներին լուծում գտնելուն, այլ որպեսզի լսումների ընթացքում ՔՊ-ն ամեն գնով ցույց տա, թե ինչքան վատ է աշխատում ՀԷՑ-ը:

Երեկ էլ արդեն Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում դարձյալ քննարկվել են էլեկտրաէներգիայի մատակարարման որակի հետ կապված խնդիրները:

Այսինքն՝ ՔՊ-ն այնքան լուրջ է տրամադրված ՀԷՑ-ը խլելու հարցում, որ անգամ Նիկոլ Փաշինյանն է հրապարակավ գործի անցել:

ՔՊ-ականներն իրենց այս ճնշումներով, ըստ էության, դուրս են եկել ոչ միայն Սամվել Կարապետյանի դեմ, այլ «ատամ» են ցույց տալիս ռուսական կողմին ու փորձում են ուղերձ հղել, որ ազատվում են ռուսական կապիտալից:

Նիկոլ Փաշինյանին, հավանաբար, զայրացրել է նաեւ այն, որ սեպտեմբերի 28-ին տեղի ունեցած Մյուռոնօրհնության սուրբ արարողության կնքահայրը հենց տիար Սամվել Կարապետյանն էր»

Փաստացի, ՀԷՑ-ի ճնշումները գործադրվել նաեւ ՀՇԿՀ նախագահ Գարեգին Բաղրամյանի վրա, ինչի պատճառով էլ ստիպված նա ազատման դիմում է գրել:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Է ԸՆԹԱՆՈՒՄ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ, ՋՈՒ ԳԾ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԸ ԵՎ ՀԱՊԿ ՆԱԽԿԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԳԱԼԻՍ ԵՆ ԴԱՏԱՐԱՆ

«Մարտի 1»-ի վերաբացված գործով այս պահին Հակակոռուպցիոն դատարանում դատավարություն է ընթանում: ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է, թե ինչպես են գործով մեղադրյալները գալիս դատարան:

Ինչպես հայտնել էինք՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը բեկանել էր ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՋՈՒ ԳԾ նախկին պետ, ՀԱՊԿ նախկին քարտուղար Յուրի Խաչատուրովի, ՀՀ ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանի, ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի վերաբերյալ քրեական գործը կարճելու մասին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի 2021թ որոշումը: Վճռաբեկ դատարանի կայքի համաձայն՝ սեպտեմբերի 12-ին Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը բավարարել է ՀՀ նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի բողոքը՝ բեկանելով դատական ակտը եւ ուղարկելով գործը նոր քննության Հակակոռուպցիոն դատարան:

Հիշեցնենք, որ 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին առնչվող՝ սահմանադրական կարգի տապալման գործով մեղադրյալի կարգավիճակում էին ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ ՋՈՒ նախկին գլխավոր շտաբի պետ, ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովը, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը եւ ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը: Յուրի Խաչատուրովը եւ Սեյրան Օհանյանը մեղադրվում էին սահմանադրական կարգը տապալելու համար, Ռոբերտ Քոչարյանը՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելու եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, իսկ Արմեն Գեւորգյանը՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելուն օժանդակելու, առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու համար:

ՍԴ-ի կողմից՝ 2021թ. մարտի 26-ին ՀՀ Քրեական օրենսգրքի (2003թ.) 300,1-րդ հոդվածը Սահմանադրության 78-րդ եւ 79-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչելուց հետո Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Աննա Դանիբեկյանի նախագահությամբ, սահմանադրական կարգի տապալման դրվագով կարճել էր քրեական գործը եւ դադարեցրել քրեական հետապնդումը՝ հանցադեպի բացակայության հիմքով, թեեւ դատախազները պահանջում էին վերաորակել արարքը: Դատախազության վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Վճռաբեկ դատարանը դիմել էր ՍԴ՝ վիճարկելով Քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների Սահմանադրությանը համապատասխանելու հարցը: Խնդիրը 1998-ին ընդունված, այժմ մասնակի գործող Քրեական դատավարության օրենսգրքի 309.1 հոդվածի 3-րդ մասն էր, որը հնարավորություն չէր տալիս հոդվածը հակասահմանադրական ճանաչելուց հետո դատարանում վերաորակել մեղադրանքը: ՍԴ-ն որոշել է մասնակի բավարարել դիմումը՝ նշելով, որ թեեւ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը, այն մեկնաբանությամբ, որ ամբաստանյալին մեղսագրվող արարքը հակասահմանադրական ճանաչվելիս մեղադրողը կարող է մինչեւ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը մեղադրյալի արարքում քրեական օրենքով նախատեսված այլ արարքի հատկանիշների առկայության պարագայում՝ անկախ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտումից:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՍԴ որոշումը, որոշել է բավարարել դատախազության բողոքը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Տրանսպորտային միջոցների պետական գրանցման գործողությունների կատարման բացառություններ սահմանելու մասին» որոշումը, որի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք մասնավոր սեփականություն չհանդիսացող, սակայն իրավաչափորեն իրենց տիրապետման տակ գտնվող կամ իրենց կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը կարող են իրականացնել անխոչընդոտ, պարզեցված եւ արտոնյալ ընթացակարգով:

Որոշման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ բռնի տեղահանման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում են հայտնվել մասնավոր սեփականություն չհանդիսացող թեթեւ մարդատար ավտոմոբիլներ, որոնք ունենալով փաստացի օգտագործողներ՝ դեռեւս չեն հանդիսանում սեփականության իրավունքի օրինական օբյեկտ: Ուստի, անհրաժեշտություն է առաջացել պետական իրավաչափ մոտեցմամբ, սոցիալական արդարության հիման վրա, պարզեցված ընթացակարգով լուծել նշված տրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման խնդիրը:

Ըստ այդմ՝ նախատեսվում է մինչեւ 2017 թ. արտադրության թեթեւ մարդատար ավտոմոբիլների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման ժամանակ բռնի տեղահանված անձանցից չպահանջել տրանսպորտային միջոցի ձեռք բերման օրինականությունը հավաստող փաստաթուղթ եւ սեփականության իրավունքի գրանցումը կատարել նշված տրանսպորտային միջոցների տիրապետման կամ օգտագործման օրինականությունը հավաստող այլ փաստաթղթի հիման վրա: Բացի այդ, սոցիալական նկատառումներից ելնելով՝ շահառուները կազատվեն նաեւ փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանք ներկայացնելու պարտականությունից: Սահմանված ընթացակարգը գործելու է մինչեւ 2025 թ. հուլիսի 1-ը դիմելու դեպքում:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱՆԽԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ գիշերն ուշագրավ իրավիճակ է եղել «Զվարթնոց» օդանավակայանում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ ժամը 05:00-ի սահմաններում օդանավակայանում ձերբակալել են Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի կրտսեր որդուն՝ Խաչատուր Բալասանյանին, ու տարել են Հակակոռուպցիոն կոմիտե:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նախկին քաղաքապետի որդին անակնկալի է եկել ստեղծված իրավիճակից ու դեռ ավելին՝ երկրից գնում էր, որ հասներ արտերկրում բուժվող հորը, սակայն իրավապահները կանխել են հոր ու որդու հանդիպումը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Ռ. ՄԵԼԻՔՅԱՆԸ՝ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Փաստաբան Ռուբեն Մելիքյանը սոցցանցի իր էջում տեսանյութի միջոցով անդրադարձել է Ջոն Կիրակոսյանի դպրոցում կատարված դեպքին:

Նա նշել է, որ հրապարակային նման գործողություն անել չէր կարելի եւ դա վատ հետեւանք է ունենում երեխաների հոգեկանի վրա:

«Երեխաները շաքար են ստացել, չեք վախենո՞ւմ, որ գիշերը չեն քնի, մղձավանջ կտեսնեն», - նշել է իրավապաշտպանը:

Ավելի վաղ նա իր ֆեյսբուքյան էջում գրել էր. «Իմ տղաները նույնպես սովորում են թիվ 20 դպրոցում: Իրավապահների ցուցադրական ու հիմնազուրկ «նիկոլիզմի» պատճառով բոլոր երեխաները ահավոր վախեցել են: Տղաներիցս մեկի դասարանցիները կարծել են՝ ահաբեկիչներ են մտել դպրոց: Էրեխեքը խուճապի մեջ սկսել են փախնել-պախկվել: Կարճ ասած՝ ԿԱԾՄԱՌ:

Կարճ ասած, նման խայտառակ օպերացիա հրահանգավորողը պետք է պատժվի: Թե չէ՝ էլի՛ են անելու: Ձեր երեխաների դպրոցներում են անելու:

ՀԳ. Բուն «հանցանքի» մանրամասներին տեղյակ չեմ, բայց դրանք բնավ էական չեն: Ամեն ինչին ձեւ կա»:

Հիշեցնենք, որ գրել էինք, որ Կենտրոն վարչական շրջանի Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցում խուճապահար իրավիճակ է եղել:

Ֆեյսբուքյան օգտատեր, «Բարի մամա» ՀԿ հիմնադիր Մարինա Ադուլյանը, ում երեխան սովորում է Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցում, հայտնել է, որ ԱԱԾ աշխատակիցները իր երեխայի ֆիզիկայի դասին մտել են դասասենյակ. «Ներխուժել է դասարան, ուսուցչին տապալել գետնին, սեղան բրդել, մազերից քաշել եւ այլն: Այդ ամենը երեխաների աչքի առաջ, 2 ժամ է չենք կարողանում էդ ամենից հետո երեխաներին հանգստացնել»:

ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողները հոկտեմբերի 9-ին՝ ժամը 20:10-ի սահմաններում, անձնական խուզարկության են ենթարկել բժշկական կենտրոնից հիմնարկ տեղափոխված կալանավորված անձ Ա?Ս?-ին: Ամբողջական խուզարկության արդյունքում ծառայողները հայտնաբերել են փաթեթ՝ թաքցված կալանավորված անձի մարմնում: Փաթեթում առկա է եղել մարիխուանա տեսակի թմրամիջոցին նմանվող, ընդհանուր 10,58 գրամ քաշով բուսական զանգված:

Հայտնաբերված զանգվածն ուղարկվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 10-ից 11-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 94 դեպք՝ որից 3-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԻՆՉՊԵ՞Ս Է ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

«Արգելապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ է գտնվում Իջեւանի «Դենդրոպարկը»: Այդ ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Լեւոն Տեր-Ներսիսյանին հարցրել եմ՝ 2023թ. փետրվարի 6-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր. 5,7 հեկտար տարածքը, որը «Դենդրոպարկի» մաս է, հատկացվել է Իջեւանի գինու, կոնյակի գործարանին՝ հանգստի գոտի վերածելու նպատակով: Որքա՞ն է կազմում 57 հեկտարի վարձակալության տարեկան գումարը, Իջեւանի գինու, կոնյակի գործարանն այդտեղ հանգստի ի՞նչ գոտի է ստեղծել, գործարանն ունի՞ բուսաբան-մասնագետներ, որպեսզի նրանք այդ 5,7 հեկտար այգու հազվագյուտ, արժեքավոր ծառերի պահպանություն եւ խնամք իրականացնեն:

Հոկտեմբերի 9-ին ստացել եմ Լեւոն Տեր-Ներսիսյանի պատասխանը, որտեղ նշված է, որ հիշյալ տարածքի վարձակալության տարեկան գումարը կազմում է 5 155 150 դրամ: Պատասխանում նաեւ նշված է. «Պայմանագրի 2-րդ կետի պայմաններով հողամասը տրամադրվել է հանգստի գոտի կազմակերպելու նպատակով: Ինչ վերաբերում է Վարձակալի բուսաբան-մասնագետներ ունենալուն՝ հազվագյուտ, արժեքավոր ծառերի խնամք ու պահպանություն իրականացնելու համար, ապա պայմանագրի 2-րդ կետի մյուս պայմաններով Վարձակալը պարտավոր է չիրականացնել կառուցապատման աշխատանքներ, չվնասել տարածքում աճող ծառաթփերն ու ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներն ու կենդանիները, ժամանակին կանխել բուսական եւ կենդանական աշխարհի վնասատուների ու հիվանդությունների տարածումը»: Իջեւանի գինու, կոնյակի գործարանը գինի ու կոնյակ է արտադրում ի՞նչ գործ ունի «Դենդրոպարկից» վարձակալությամբ վերցված տարածքում հանգստի գոտի կազմակերպելու հետ: Առավել անտրամաբանական է, որ գինու, կոնյակի գործարանը կարող է այդ տարածքում «ժամանակին կանխել բուսակլան եւ կենդանական աշխարհի վնասատուների ու հիվանդությունների տարածումը»: Սկսած 2020 թվականից Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից ապօրինի կերպով Աղստեւ գետի հունը փոխելու, գետի հունում երկար, մեծ բետոնե պատ կառուցելու հետեւանքով Իջեւանի «Դենդրոպարկը» մնացել է առանց ոռոգման ջրի, ծառայգում չորացել են շուրջ 25 000 տնկի, 1500-ից ավելի հազվագյուտ ծառեր ու թփեր, որոնցից մոտ 250 տեսակը Դենդրոպարկում» արդեն վերացել է: Հայտնի չէ, թե դրանից հետո ինչ տրամաբանությամբ բուսաբանական այգու կարգավիճակ ունեցող Իջեւանի Դենդրոպարկից» 5,7 հեկտար տարածք տրվել է բնությանը միլիոնավոր դոլարների վնաս տված Իջեւանի գինու, կոնյակի գործարանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Տավուշ

ՈՒՇԱԳՐԱՎ ԹՎԵՐ

ՈՐ ՄԱՐԶՈՒՄ ԵՆ ԳՐԱՆՑՎԵԼ ԱՄԵՆԱՇԱՏ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ 2023 թվականին գրանցված հանցագործությունների քանակը ըստ հանցատեսակների՝ ՀՀ մարզերում եւ մայրաքաղաքում:



Մայրաքաղաք Երեւանում գրանցվել է 608 սպանություն, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 300 դեպք, որից 80-ը ծանր, սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների 56 դեպք:

Արագածոտնի մարզում 2023 թվականին տեղի է ունեցել 21 սպանություն, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 43 դեպք, որից 12-ը՝ ծանր:

Արարատի մարզում 2023 թվականին տեղի է ունեցել 60 սպանություն, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 98 դեպք:

Արմավիրի մարզում 2023 թվականին տեղի է ունեցել 19 սպանություն, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու 130 դեպք, որից 32-ը ծանր, սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների 26 դեպք:

2023 թվականի Գեղարքունիքի մարզում տեղի է ունեցել սպանության 76 դեպք, դիտավորությամբ առողջությանը վնաս հասցնելու 56 դեպք, որից 14-ը ծանր:

2023 թվականին հասարակական անվտանգության, հասարակական կարգի եւ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների թիվը, այդ թվում հրազեն, ռազմամթերք պատրաստելը եւ ապօրինի շրջանառության դեպքերը մայրաքաղաքում կազմել է 304, Արագածոտնի մարզում 69, Արարատի մարզում 62, Արմավիրի մարզում 100, Գեղարքունիքի մարզում 104 դեպք:

Մայրաքաղաքում նույն թվականին գրանցվել է ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու 873 դեպք, որից 43-ը մահվան ելքով, խուլիգանության 315 դեպք, որից 61-ը կատարվել է զենքի գործադրմամբ:

Թմրամիջոցների հետ կապված 2986 դեպք 2023 թվականին տեղի է ունեցել մայրաքաղաքում, որից 2942-ը թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, իսկ դրանից 1893-ը իրացնելու նպատակով:

Արագածոտնի մարզում 2023 թվականին հրազեն, ռազմամթերք պատրաստելու եւ ապօրինի շրջանառելու 69 դեպք է գրանցվել: Արագածոտնի մարզում ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու 88 դեպք է գրանցվել, որից 10-ը մահվան ելքով: Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների 169 դեպք է տեղի ունեցել, որից 158-ը թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ, իսկ դրանից 92-ը իրացնելու նպատակով:

2023 թվականին Արմավիրի մարզում տեղի է ունեցել հրազեն, ռազմամթերք պատրաստելու եւ ապօրինի շրջանառելու 100 դեպք, ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու 221 դեպք, որից 16-ը մահվան ելքով: Նույն թվականին Արմավիրի մարզում տեղի է ունեցել խուլիգանության 43 դեպք, որից 15-ը զենքի գործադրմամբ: Թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ տեղի են ունենում 678 դեպք, որից 585-ը թմրամիջոցների ապօրինի շրջանառություն է, իսկ դրանցից 48-ը իրացնելու նպատակով:

Գեղարքունիքի մարզում 2023 թվականին հրազեն, ռազմամթերք պատրաստելու եւ ապօրինի շրջանառության 104 դեպք է գրանցվել, ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտման 107 դեպք, որից 17-ը մահվան ելքով:

Թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ եղել են 87 անգամ, որից 82-ը թմրամիջոցների ապօրինի շրջանառություն է, իսկ դրանցից 44-ը՝ իրացնելու նպատակով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԻՐԱՔԵԿ

«ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՇՈՒՐ». ՈՎ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Օրեր շարունակ համացանցում շատ թեժ քննարկվում է «Մոսկվա» կինոթատրոնի դիմաց կատարված «վարդագույն միջոցառումը»: Մի խումբ տղամարդիկ վարդագույն հագուստով շրջում էին կենտրոնում եւ անհանգստություն պատճառում անցորդներին:

Շատ տեսանյութերում երեւում է, թե ինչպես են քաղաքացիները բղավում, որ նրանք հեռու գնան իրենցից՝ վախ առաջացնելով թե՛ երեխաների, եւ՛ թե մեծահասակների մոտ:

Շատերի համար սա ընկալվեց սատանայական երեւույթ, իսկ պետական կառույցները այդպես էլ չմեկնաբանեցին, թե որն է նման միջոցառման նպատակը, ով է պատասխանատուն եւ ինչու են նման սարսափելի իրավիճակ ստեղծում քաղաքի հենց կենտրոնում:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Երեւանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի հետ, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան, իսկ Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը մեզ հետ զրույցում ասաց, որ դա քաղաքապետարանի կազմակերպած միջոցառումը չէ, իսկ կազմակերպիչը High fast-ն է կազմակերպել, այլ մանրամասների չի տիրապետում:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց նաեւ կապ հաստատել High fast կազմակերպության հետ՝ մեր հարցերի պատասխանները գտնելու համար, սակայն մեր զանգերը կրկին մնացին անպատասխան:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿՓՈԽՎԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Էրեբունի-Երեւան 2806-ամյակին նվիրված տոնակատարության միջոցառումներով պայմանավորված՝ ս.թ. հոկտեմբերի 11-ին՝ ժամը 12:00-ից մինչեւ հոկտեմբերի 12-ի ժամը 21:00-ն փակ է լինելու «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի դիմացի հրապարակը: Այդ մասին տեղեկացնում են Երեւանի քաղաքապետարանից:

Ըստ այդմ՝ Երեւանի ներհամայնքային ավտոբուսային հ. 18, 38, 56 երթուղիների աշխատանքը ժամանակավորապես կկազմակերպվի Ազատամարտիկների, Նորաշենի փողոցներով մինչեւ Գ. Մահարու փողոց, այնուհետեւ՝ գործող ուղեգծերով:

Նույն ժամանակահատվածում կդադարեցվի տրոլեյբուսային հ.2 երթուղու աշխատանքը, իսկ հ.2 «Ա» երթուղու աշխատանքը կկազմակերպվի բնականոն ռեժիմով:

Ժամանակավոր անհարմարությունների համար քաղաքապետարանը հայցում է քաղաքացիների ներողամտությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունն ընդունել է որոշում, որով նախատեսվում է ապահովել քաղաքացիական անհայտ կորածների ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրման շարունակականությունը:

Ըստ այդմ՝ անհայտ կորածի (ինչպես նաեւ գերեվարվածի) ընտանիքները եւս 2 ամիս (2024 թվականի սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսներ) կստանան սոցիալական աջակցություն՝ ամսական 300.000 դրամի չափով, որի համար դիմում կարող են ներկայացնել մինչեւ 2024 թ. հոկտեմբերի 15-ը ներառյալ:

Սոցիալական աջակցությունը պետք է տրամադրվի 11 անհայտ կորած (ինչպես նաեւ գերեվարված) անձանց ընտանիքներին:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ Է ԴԱՐՁԵԼ

Հայաստանի Հանրապետությունում ծխախոտային արտադրանքից (ԱՏԳ ԱԱ 2402 ծածկագիր) եւ ալկոհոլային ապրանքներից (ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00, 2207 եւ 2208 ծածկագրեր), բացի մայիսի 1-ից հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման պահանջը պարտադիր է նաեւ փաթեթավորված խմելու ջրի դեպքում, ներառյալ՝ բնական կամ արհեստական հանքային ջրերը՝ գազավորված կամ չգազավորված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելման (ԱՏԳ ԱԱ 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ծածկագրեր): Ի դեպ, մինչեւ 2024 ապրիլի 30-ը ներառյալ ներկայացված հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակներով դրոշմավորված ջրերը կարող են չդրոշմավորվել հսկիչ նույնականացման նշաններով:

Հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման նպատակն է՝ շրջանառությունում գտնվող յուրաքանչյուր ապրանքի նկատմամբ իրականացնել վերահսկողություն՝ արտադրությունից կամ ներմուծումից մինչեւ մանրածախ վաճառք ապահովելով ապրանքների հետագծելիություն: Դրոշմավորման ենթակա ապրանքները վաճառքից առաջ արտադրող կամ ներմուծող ընկերությունների կողմից դրոշմավորվում են DataMatrix ծածկագրով, որը փակցվում է ապրանքի փաթեթավորման վրա: Ծածկագիրը գրանցվում է E-Mark համակարգում եւ վերջնական սպառման ժամանակ սկանավորվում՝ վաճառքի կետի դրամարկղում՝ համակարգին տեղեկացնելով ապրանքի շրջանառությունից դուրս գալու մասին: Այսինքն, վաճառքի կետերը դրոշմավորված ապրանքը վաճառելու համար պետք է ապահովված լինեն երկչափ շտրիխ կոդեր կարդացող սկաներներով: Ապրանքների վերջնական սպառման ժամանակ սկանավորվում է DataMatrix կոդը, որի տվյալը ՀԴՄ տվյալների հետ միասին փոխանցվում է ՊԵԿ տեղեկատվական շտեմարան: Իսկ տեղեկատվությունը չփոխանցելը կդիտվի որպես ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում:

Այժմ իրականացվում են կաթանամթերքի, գարեջրի եւ գարեջրային խմիչքների, կոսմետիկական կամ դիմահարդարման եւ մաշկի խնամքի միջոցների, ոչ ալկոհոլային ըմպելիքների, պահածոյացված մթերքի, շոկոլադի եւ կակաո պարունակող սննդամթերքի, մակարոնեղենի եւ այլ մթերքների փորձնական ծրագրերը:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Սույն թվականի հոկտեմբերի 11-ից նոյեմբերի 28-ը Ֆասթ Բանկը նախատեսում է տեղաբաշխել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, դրամային՝ 10.25, դոլարային՝ 6.25 եւ եվրոյով՝ 5.25 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը 7,000,000,000 ՀՀ դրամ է: Մեկ արժեթղթի անվանական արժեքն է՝ դրամային՝ 100.000 ՀՀ դրամ, դոլարային՝ 100 ԱՄՆ դոլար, եվրոյով՝ 100 եվրո: Պարտատոմսերը թողարկվում են 36 ամիս մարման ժամկետով արժեկտրոնային եռամսյակային վճարման պարբերականությամբ:

Պարտատոմսերը հնարավոր է ձեռք բերել Բանկի 34 մասնաճյուղերից տեղաբաշխող «Դայմենշն» ՓԲԸ-ից՝ լրացնելով հայտ-հանձնարարականը եւ մինչեւ տվյալ օրվա ժամը 15:30-ը գումարը փոխանցելով տրամադրված հաշվեհամարներին:

Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր, հանրային ծառայությունների համարանիշ, ինչպես նաեւ բանկային հաշիվների տվյալներ:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից: Ցուցակված պարտատոմսերից ստացված եկամուտները հարկման ենթակա չեն ֆիզիկական անձանց համար:

Ֆասթ Բանկի պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ ԿԲ նախագահի 11.09.2024թ?-ի թիվ 1/354 Ա որոշմամբ:

Ծրագրային ազդագիրն ու թողարկման ամբողջական պայմանները ներկայացված են Բանկի կայքէջում:

Ավելի վաղ հայտնել էին, որ այս տարի Հայաստանը երկրորդ անգամ հյուրընկալեց նորարարության եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսին՝ WCIT 2024/DigiTeď-ին: Ֆասթ Բանկը WCIT 2024/DigiTeď-ի բանկային գործընկերն էր եւ DigiTeď-ի ֆինտեք հովանավորը: Տարածաշրջանի տեխնո իրադարձության մեկնարկն ազդարարվեց Ֆասթ Բանկի եւ Fastex-ի կողմից յուրահատուկ նվերով երեւանցիներին եւ մայրաքաղաքի հյուրերին. Ֆասթ Բանկի եւ Ֆասթեքսի հատուկ հրավերով Հայաստան էր ժամանել համաշխարհային աստղ Ջեյսոն Դերուլոն: Հանրապետության հրապարակում բացառիկ համերգային ծրագրով ելույթ ունեցավ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ առցանց ռեժիմում արհեստական բանականության կողմից ինտեգրված երաժշտությամբ: Երեկոյի երկրորդ հատվածում շքեղ երաժշտական շոուով հանդես եկավ Ջեյսոն Դերուլոն:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: Ֆասթ բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ

Ի պատասխան լրատվամիջոցների հրապարակումների եւ հարցադրումների՝ Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թվականի ընթացքում «Տոյոտա Երեւան» ՍՊԸ-ում ստուգումներ չեն իրականացվել:

ՊԵԿ-ը վերստին ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ստուգումներն իրականացվում են ռիսկային չափորոշիչների հիման վրա, հետեւաբար, ստուգումների ցանկում կարող է հայտնվել յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտ՝ հարկային կարգապահության հետ կապված խնդիրների հայտնաբերման դեպքում:

ՊԵԿ–Ը ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ՈՒՇԱԴԻՐ ԼԻՆԵԼ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ հարկ վճարողների կողմից անկանխիկ եղանակով վճարումներ ընդունելու հնարավորության ապահովման հետ կապված տեղի են ունեցել քննարկումներ Կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ: Քննարկումների ընթացքում ԿԲ ներկայացուցիչների կողմից հավաստիացվել է, որ ՀՀ առեւտրային բանկերում գործընթացի մեկնարկային փուլում ժամկետների մասով արձանագրված խնդիրները ներկայումս բացակայում են:

Հիմք ընդունելով «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգավորումները՝ Պետական եկամուտների կոմիտեն հորդորում է բոլոր այն հարկ վճարողներին, որոնց մոտ դեռեւս ակտիվացված չէ վճարային քարտերի միջոցով անկանխիկ վճարումների ընդունման գործառույթը, ինչպես նաեւ ունեն ՀՀ առեւտրային բանկերին ներկայացված դիմումներ՝ հետեւողական լինել գործընթացն ավարտին հասցնելու հարցում:

Միաժամանակ, ՊԵԿ-ը տեղեկացնում է, որ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմնի կողմից իրականացվող վարչարարության շրջանակում, ՀՀ առեւտրային բանկերին միայն դիմում ներկայացված լինելու փաստը, հաշվի չի առնվելու որպես բարենպաստ հանգամանք:

Հիշեցնենք, որ «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու պարտավորություն ունեցող հարկ վճարողները պարտադիր պետք է ապահովեն վճարային քարտերի միջոցով անկանխիկ վճարման ընդունման հնարավորություն:

ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ ՆՎԱԶՈՒՄ Է

Ներքին գործերի նախարարության բարեփոխումների շրջանակում մեկնարկած թվայնացման գործընթացի արդյունքում ՆԳՆ հաշվառման քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների եւ լիցենզավորման վարչության տարածքային հաշվառման քննական բաժիններում ցանկացած գործարք կատարելիս քաղաքացիները վճարումը կարող են կատարել տեղում՝ գործարքը կատարող աշխատակցի մոտ:

Հաշվառման քննական բաժիններում տեղադրված POS տերմինալների միջոցով անկանխիկ վճարում կատարելու արդյունքում խնայվում է եւ՛ քաղաքացու, եւ՛ գործարքը կատարող աշխատակցի ժամանակը, էապես նվազում է միջնորդավճարը:

Ներքին գործերի նախարարությունը հորդորում է Երեւանի եւ մարզերի հաշվառման քննական բաժիններում սպասարկվելիս վճարումը կատարել POS տերմինալներով՝ քարտային տարբերակով, հերթերից խուսափելու եւ հնարավորինս արագ սպասարկվելու նպատակով:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԷԴԻԹ ՊԻԱՖ

ԻՆՉՊԵՍ ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԲԵՄԸ ԴԱՐՁԱՎ ՓԱՌՔԻ ՈՒՂԻ

Ֆրանսիացի երգչուհի, երգերի հեղինակ Էդիթ Պիաֆը կամ կրճի, ռոմանտիզմի, խարիզմայի մարմնացումը մինչ օրս շարունակում է հիացնել իր ձայնով, կերպարով ու կեցվածքով:

Ցավոք, երգչուհին մեր օրերում ֆիզիկապես չի շարունակում իր գոյությունը, սակայն իր երգերը իր կենդանի վկայությունն են:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է երգչուհու կյանքից հետաքրքիր պատմություն:

Էդիթ Պիաֆի կյանքը լի էր սկանդալային եւ դրամատիկ դեպքերով, որոնք նպաստել են վերջինիս հանրային կերպարի ձեւավորմանը: Նրա ամենասկանդալային պատմություններից մեկը կապված է եղել նրա անձնական եւ սիրային կյանքի հետ:

Պիաֆն ուներ բազմաթիվ սիրավեպեր, որոնցից մեկը մեծ աղմուկ բարձրացրեց նրա հարաբերությունների վերաբերյալ ֆրանսիացի բռնցքամարտիկ Մարսել Սերդանի հետ: Բանն այն է, որ Սերդանը ամուսնացած էր, եւ նրանց սիրավեպը համարվեց սկանդալային այն ժամանակվա հասարակության համար: Չնայած հարաբերությունների գաղտնիությանը, նրանք խիստ կապված էին, եւ նրանց սիրային կապը հայտնի դարձավ լայն հանրության շրջանակում:

Սերդանը 1949 թվականին զոհվեց ինքնաթիռի կործանման հետեւանքով, երբ ուղեւորվում էր Նյու Յորք՝ հանդիպելու Պիաֆին: Այս կորուստը խորը հարված էր Պիաֆին, եւ նրա կյանքն այդ դեպքից հետո նորից ընկղմվեց ալկոհոլի ու թմրամիջոցների մեջ, ինչը միայն խորացրեց իր արդեն իսկ դժվարություններով լի կյանքը, քանի որ բացի սիրային դրամաներից Պիաֆը պայքարել է կախվածությունների, առողջական խնդիրների դեմ:

Պիաֆի կյանքի մեկ այլ սկանդալային պատմություններից մեկն էլ այն է, որ նա երիտասարդ տարիքում հայտնվել էր Փարիզի փողոցներում՝ երգելով գումար աշխատելու նպատակով: Այդ ժամանակ Պիաֆն ընկավ փողոցային գանգստերների ազդեցության տակ, որոնք շահագործում էին նրան: Այդ ժամանակաշրջանում էլ Էդիթ Պիաֆին նկատել է Փարիզի հայտնի գիշերային ակումբներից մեկի սեփականատերը՝ Լուի Լեպլեն, ով Պիաֆին տվեց «La Mıme Piaf» («Փոքրիկ ճնճղուկ») մականունը, ինչն էլ դարձավ նրա բեմական անունը:

Սակայն 1936 թվականին, երբ Լեպլեն սպանվեց, Էդիթ Պիաֆը դարձավ կասկածյալ եւ ժամանակավոր ձերբակալվեց ոստիկանության կողմից, քանի որ որոշ ենթադրություններ կային, որ նա կապ ունի այդ սպանության հետ: Թեեւ նա անմեղ էր եւ հետագայում արդարացվեց, սկանդալը մեծ վնաս հասցրեց նրա հեղինակությանը: Մամուլը փորձեց նրան կապել քրեական միջավայրի հետ, ինչը միայն սրեց իր անձնական կյանքում արդեն եղած խնդիրները:

Այս դեպքը ոչ միայն վատթարացրեց նրա հոգեբանական վիճակը, այլեւ նրան ավելի խորը դարձրեց իր երաժշտության եւ արվեստի մեջ՝ արտահայտելով այդ դժվարությունները երգերի միջոցով, ինչպիսիք են «La Vie en rose»-ը, որը իր ամենահայտնի գործերից մեկն է:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՃԱՐՆԵՐՈՒՄ

Արգենտինաբնակ երաժիշտ, Հայ բարեգործական ընդհանուր միության Բուենոս Այրեսի մասնաճյուղի պատվավոր անդամ Գագիկ Գասպարյանը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, տասնչորս ելույթներով մեկնելու է եվրոպական մի շարք երկրներ՝ օտարազգի հանդիսատեսին հայկական բազմադարյան մշակույթին ծանոթացնելու նպատակով: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀԲԸՄ Բուենոս Այրեսի մասնաճյուղի ֆեյսբուքյան էջը:

Գագիկ Գասպարյանը դուդուկի կատարումներով հայկական հնագույն հոգեւոր երաժշտությունը ներկայացնելու է Իսպանիայի, Հոլանդիայի, Հունաստանի, հռչակավոր տաճարներում: Ելույթ է նախատեսվում նաեւ Կ.Պոլսի հայաշատ Ֆերիգյուղի Ս. Վարդանանց եկեղեցում:

Երաժշտացանկում ընդգրկված են Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Կոմիտասի, Մխիթար Այրիվանեցու, Մակար Եկմալյանի, Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունները, հնչելու է նաեւ եվրոպական հոգեւոր երաժշտություն:

Գլխավոր համերգը կայանալու է նոյեմբերի 23-ին՝ Բարսելոնայի Սագրադա Ֆամիլիա պատմական տաճարում:

«ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ – 100»

Հոկտեմբերի 16-31-ը Հայաստանի պետական կամերային նվագախումբը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ կունենա բացառիկ համերգային շրջագայություն՝ «Շառլ Ազնավուր - 100» խորագրով:

Հյուրախաղերի նպատակն է հարգել Ազնավուրի հիշատակը, ներկայացնել նրա ստեղծագործական ժառանգության լավագույն նմուշները եւ վերապրել այն հույզերն ու սերը, որ շանսոնյեն ոգեշնչում էր սերունդներին: Համերգային շրջագայությունը կընդգրկի 6 երկրներ եւ 9 քաղաքներ, որտեղ տեղի կունենան հուզիչ 9 համերգներ: Համերգներ կկայանան Իտալիայում, Անգլիայում, Ուելսում, Բելգիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում:

Կհնչեն Ազնավուրի անմահ ստեղծագործությունները՝նոր մշակումներով եւ գործիքավորումներով, որոնք նոր շունչ կհաղորդեն նրա հայտնի երգերին:

Համերգների ծրագրերում ընդգրկված են բացառապես հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ Ազնավուր, Կոմիտաս, Ամիրխանյան, Մանսուրյան, Ալթունյան եւ Ահարոնյան:

Շրջագայության առաջին 5 համերգները կղեկավարի դիրիժոր Սիփան Օլահը (Մեծ Բրիտանիա), մենակատարներ՝ Սիփան Օլահ (տենոր), Աստղիկ Վարդանյան (ջութակ), Հայարփի Եղիկյան (սոպրանո, Մեծ Բրիտանիա), Սոնա Բարսեղյան (դաշնամուր): Գերմանիայի Թյուբինգեն քաղաքում համերգը կղեկավարի դիրիժոր Ֆիլիպ Ամելունգը, իսկ Շտուտգարտում՝ դիրիժոր Ֆրից Կրեմերը: Մենակատարներ՝ Աստղիկ Վարդանյան (ջութակ) եւ Սոնա Բարսեղյան (դաշնամուր):

Ֆրանսիայի Ստրասբուրգ եւ Նանսի քաղաքներում նվագախումբը ելույթ կունենա դիրիժոր Գարիկ Քյուրկչյանի ղեկավարությամբ: Մենակատարներ՝ Աստղիկ Վարդանյան (ջութակ), Սոնա Բարսեղյան (դաշնամուր), ինչպես նաեւ երգիչներ՝ Արայիկ Ավանեսյան եւ Վարդուհի Թորոյան:

Հիշեցնենք, որ 2024 թվականին նշվում է աշխարհահռչակ հայ շանսոնյե Շառլ Ազնավուրի 100-ամյակը: Այս համերգային շրջագայությունը խոստանում է դառնալ բացառիկ մշակութային իրադարձություն, որը կամրջում է սերունդներին եւ նորից վեր է հանում Ազնավուրի երգերի հավերժական թեմաները՝ սեր, կարոտ, երազանք եւ հույս: «Շառլ Ազնավուր - 100» համերգային շրջագայությունը ոչ միայն մեծարում է վարպետին, այլեւ հաստատում նրա տեղը երաժշտության պատմության մեջ՝ որպես ժամանակակից աշխարհի մեծագույն արտիստներից մեկը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈԱ–ՎԻԿԻՆԳՈՒՐ ԽԱՂԸ

Կոնֆերենցիաների լիգայի Լիգայի փուլի 4-րդ տուրում «Նոան» Երեւանում կմրցի «Վիկինգուրի հետ»:

Երեւանյան թիմն արդեն սկսել է երկրորդ տնային խաղի տոմսերի օնլայն վաճառքը: Նախորդ տնային խաղի համեմատ այս անգամ տոմսերի գներն ավելի մատչելի են: Տոմսերը հասանելի են tiăkets.noahfă.aշ կայքում:

Հիշեցնենք, որ առաջին տուրում Ռուի Մոտայի գլխավորած թիմը Երեւանում 2:0 հաշվով հաղթանակի հասավ չեխական «Մլադա Բոլեսլավի» նկատմամբ:

«Նոա» - «Վիկինգուր» խաղը տեղի կունենա նոյեմբերի 18-ին, Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում ու կսկսվի 21:45-ին:

5–ՐԴ ՏԵՂԸ՝ Unity Euro Cup–ՈՒՄ

Շվեյցարիայի Նիոն քաղաքում հոկտեմբերի 9-10-ը կայացել է փախստականների համար նախատեսված Unity Euro Cup-2024 մրցաշարը, որի 16 մասնակից երկրների շարքում էր նաեւ Հայաստանը, հաղորդում է ՀՖՖ մամուլի ծառայությունը:

Վիճակահանության արդյունքում Հայաստանի թիմն ընդգրկվել էր C խմբում, որտեղ մրցակիցներն էին Սլովենիան, Լատվիան եւ Մալթան:

Հայաստանի փախստականների հավաքականը հաղթել է Մալթային (1-0) ու Սլովենիային (2-1), պարտվել Լատվիային (1-2) ու խմբում գրավել երկրորդ տեղը:

Վերջին խաղում Հայաստանի թիմը 2-1 հաշվով հաղթել է Իսպանիային ու մրցաշարն ավարտել է 5-րդ տեղով:

Կ. ԳԻԼՈՅԱՆԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը հոկտեմբերի 9-ին Եվրոպայի խորհրդի կողմից նշանակվել է Համաշխարհային հակադոպինգային գործակալության (WADA) հիմնադիր խորհրդի անդամ՝ 3 տարի ժամկետով:

Ինչպես հայտնել են նախարարությունից, այս պաշտոնում նա ներկայացնելու է Եվրոպայի խորհուրդը:

WADA-ի 42 անդամներից բաղկացած խորհուրդը որոշումներ կայացնող բարձրագույն մարմինն է:

Ներկայում խորհրդի գրեթե կեսը (20/42) կազմված է միջազգային ակտիվ կամ նախկին մարզիկներից:

«Սպորտում դոպինգի դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիային Հայաստանն անդամակցում է 2010 թվականից: WADA-ն մշակում է հակադոպինգային ընդհանուր ստանդարտներ եւ հակադոպինգային օրենսգիրք, որոնք ենթակա են պարտադիր կատարման անդամ բոլոր պետությունների կողմից:

● *Հոկտեմբերի 14-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Կուլիսներում, կամ թատրոնի անատոմիա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Ալիսա Հայրապետյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 272-րդ հոդված):

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք: Ո՞ւմ է տրվում առաջնահերթություն:

Սիրան Հակոբյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն: Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի նկարիչների միությունում տեղի ունեցավ անվանի գեղանկարիչ Մեխակ Էլբակյանի ստեղծագործական ուղին ներկայացնող «Կես դար» խորագրով ցուցահանդեսի բացումն ու պատկերագրքի շնորհանդեսը:

Նկարիչների միության «Մարտիրոս Սարյան» ցուցասրահում բացված ցուցահանդեսն ընդգրկում է Մեխակ Էլբակյանի ինչպես տարբեր տարիների, այնպես էլ նոր ստեղծագործություններ, որոնք զետեղված են նաեւ նրա ստեղծագործական կեսդարյա ուղին ներկայացնող պատկերագրքում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +15 + 20
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +14 + 19
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +17 + 20
Գեղարքունիք	+ 4 + 8 +14 + 17
Լոռի	+ 6 + 10 +16 + 19
Տավուշ	+ 8 + 13 +17 + 20
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +18 + 20

Արարատ	+ 13 + 15 +19 + 22
Արմավիր	+ 12 + 14 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +15 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +16 + 18
ԼՂՀ	+ 8 + 10 +15 + 18
Երեւան	+11 + 14 + 15 + 19

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*